

ընդ Յոհաննու եւ ճնողաց իւրոց, յերկրին Պուղ-
տանաց, ի Սեչով ընդ հովանեաւ Ս. Իսաչ եկե-
ղեցուն, գրեցաւ ձեռամբ Յակոբ չնչին երէց-
փոխին, Թ. Հ. ՌՄԺ,» (== 1761:) Այս եկե-
ղեցւոյն մէջ կայ նաեւ Եկեղեցւոյ երկից սուրբ
վարդապետաց մէկ պատկերն, 1810ին նկա-
րուած, ումանական արձանագրութեամբ: Եկե-
ղեցւոյ յատակը ծածկած են բաղմամբիւ տապա-
նաքարեր՝ արձանագրութեամբք, որոնց միայն
մէկ քանին ընթեռնել է:

Նաեւ եկեղեցւոյն արեւմտեան գաւիթը
կայ տապանաքար մը, հետեւեալ արձանագրու-
թեամբ. «Այս է տապան հանգստեան Իսային
եւ Մուղալին, որ է դուստր եւ որդի տէր Ան-
տոնի. հանկեաւ թվ. ՌԿԵ(Է) օգոստոսի օրն
Բշաբղի» * (1618):

Յայտօր Սուչավայի ժողովրդապետական
եկեղեցին պահուած աւետարանն այս եկեղե-
ցւոյն մէջ Սուչավացի Յովհաննէս քահանայէն
գրուած է յամին ՌՂ (== 1641):

Յամին 1622 Էջմիածնի¹⁰⁵ հայ պատրիարքն
Մելքիսեդեկ իւր հայրենիքէն փախաւ, իւր եղ-
բորորդին ՂՍահակ իրեն յաջորդ ձեռնադրելէն
ետեւ, վասն զի Պարսից Շահ Աբաս թագաւորին
պահանջած 2000 տուքադ հարկն չէր կրնար

* Ըստ Բժշկեանի, (Ճանապարհորդութիւն, Վե-
նետ. 1830, էջ 192,) իսկ զերմ. թարգմանութեան մէջ
է՝ «Այս է տապան հանգստեան Եսայեայ Մուղալեան,
որ է դուստր տէր Անտոնի եւ Մուղալինայ, օրն Բշաբ-
ղի ՌԿԷ:»,
Ծ. Թ.